















ձեռնարկներին անապականութեան եւ ապականելիութեան հակադիր տեսութիւնները միաբանակութեան յայտնի ներկայացուցիչներ Յուլիանոս Հալիկոնացու եւ Սեւերոս Անտիոքացու միջեւ տեղի ունեցած բանավէճերով: Ըստ Յուլիանոսի՝ Քրիստոսի մարմինն, իր յարութիւնից առաջ, անապական եւ անշարժարեւի էր. իսկ ըստ Սեւերոսի՝ ապականացու եւ շարժարեւի<sup>64</sup>: Առընչուելով այս հարցերի հետ՝ նեստորականութիւնը «Պատճառք»-ի ե՛ւ պատմական, ե՛ւ վիճարանական մասերում քննադատուած է որպէս ապականելիութեան ուսմունքին հետեւող աղանդ, թէ «բանիւք չհամարձակեցան ասել ապականացու, [բայց] հնարեցան խմորով եւ ջրով ապականել ... յաւելեալ աղ եւ ձէթ» (տ. 34—36), «մարմինն միայն խաչեցաւ, եւ այն՝ ապականացու» (տ. 42—43), եւ այլն: Ճիշտ է, որ նեստորական ասորիներն ինքնուրոյն հաւաքականութիւն էին եւ ներքին հաղորդակցութիւն չունէին ասորական միաբանակեկեղեցու յուլիանական եւ սեւերեան հատուածների հետ, բայց, ապականելիութեան տեսութեան որդեգրմամբ, նրանք յարում էին Սեւերոս Անտիոքացու տեսակէտին: «Պատճառք»-ից բխող այս հետեւութիւնը համապատասխան է պատմական այն իրողութեանը, որի համաձայն սեւերեան վարդապետութիւնը Յուստինոս Ա. կայսեր (518—527 թթ.) օրերում արդէն տարածուած էր նեստորականութեան մարտկոցը հանդիսացող Մծբնում եւ չըջաններում<sup>65</sup>:

Այս հանգամանքներից ելնելով՝ դռնուած ենք, որ «Պատճառք»-ի այս վիճարանական մասը պէտք է ստեղծուած լինի Զ. դարում, քաղկեդոնական ասորիների միջավայրում եւ, ըստ երեւոյթին, նեստորականութեան դէմ դաւանական ժխտումներ հիմնադրելու մտահոգութեամբ է, որ այն վերադրուել է պատմական հեղինակութիւն ունեցող Կեղեստինոս Ա.ին, որը մի ժամանակ զբաղուել էր Նեստորի հարցով եւ բացասական դիրքաւորում ունեցել նրա հանդէպ:

Այժմ տեսնենք, թէ վարդան Այգեկցին ո՛ր չափով եւ ի՛նչ ձեւով է օգտուել այս ան-

վաւերական աղբիւրից: Հատուածները խրմբաւորում ենք զոյգ-զոյգ՝ հարցուպատասխաններով:

1ա. Բարսամա ասէ.  
Զիսց պատարագին ո՞րպէս ասէք Աստուած, ասա ինձ գտոյզն (էջ 343բ):

1բ. Կելեստիանոս Հոռուայ հայրապետն ասէ.

Ասեմ եւ հաւատամ գիաց պատարագին Աստուած բովանդակ, առանց ապականութեան, խառնեալ Աստուած Բանն ընդ մարդկութիւնս, եւ եղիւ մի բնութիւն (էջ 343բ):

Այս հարցուպատասխանը, որ Ա.Հ-ի Դ. գլխում է, հաւանաբար առնուած է «Պատճառք»-ի մի այնպիսի օրինակից, որը որոշ տարբերութիւններ ունէր մեր հրատարակածից: Յիրաւի՝ Յովհաննէս Վանականն էլ իր ձեռքում ունեցել էր մի տարբեր օրինակ: Նա գրում է. «Բաղում ինչ այլայլեցին յառաքելական կարգաց, որպէս զտաւն ծննդեանն եւ զՉուրն՝ որ ի խորհուրդն արկանեն: Թող ցուցանեն մեզ զվէճն Կեղեստինոսի ընդ Բարսամայի՝ թէ չվկայէ մեզ, որ ասաց Բարսամայ թէ Դո՛ւք միայն էք անխմոր եւ անշուր խորհրդով, եւ նա ասէ. Մի՛ բարի քեզ, ահա ազգն Հայոց Մեծաց ընդ մեզ են, որք ուսան ի սուրբ Գրիգորէ որ հրեղէն սիւն է եւ երկնահաս լեռան»<sup>66</sup>: Թէ՛ վանականի այս մէջբերումը եւ թէ՛, վերեւում, Կեղեստինոսի պատասխանի մէջ դռնուող եւ եղիւ մի բնութիւն բառերը անտարակուսելի են դարձնում հայ խմբագրի միջամտութիւնը:

2ա. Բարսամա ասէ.  
Ապա մինչ այն ջուրն որ ի կողիցն ել՝ չէր ապականութիւն, գոր մեք ի գինին խառնեմք՝ ընդէ՞ր դարովէք (էջ 371բ):

2բ. Կելեստիանոս ասէ.  
Մի՛ թիւրեր անմտութեամբ գրանդ, զի այն ջուրն ոչ է ի պատարագին խորհուրդ, այլ ի մկրտութեանն (էջ 371բ):  
Հմմտ. «Պատճառք» տ. 96—99:

3ա. Բարսամա ասէ.  
Կարե՞ս յիշել զայն որ ի Կաթողիկէսն

<sup>64</sup> Հմմտ. Ե. Գ. Տէր-Մինասեան, «Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները ասորոց Եկեղեցիների հետ», Ս. Էջմիածին, 1908, էջ 84—85:

<sup>65</sup> Հմմտ. J.-M. Fiey, p. 49.

<sup>66</sup> Տես «Գրք թղթոց», էջ 535:

ասէ, թէ ջուրն եւ արիւնն եւ հոգին մի են (էջ 371բ):

3բ. Կելեստիանոս ասէ.  
Յիմար եւ անմիտ, դո՛ւ դատեցար զքեզ. զի թէ յառաջ զարիւնն էր ասացեալ եւ ապա զջուրն, բարիոք էր. բայց նախ զջուրն ասաց, զի յառաջ ջրով մկրտիմք եւ ապա հոգին մաքրե՞մք, եւ ապա արժանի լինիմք մարմնայ եւ արեանն Տեառն, որպէս եւ Տէրն ասէ. Որ ոչ ծնցի ի ջրոյ եւ ի հոգոյ, ո՛չ մտցէ յարեալս ինն Աստուծոյ: Բայց դու ասա ինձ՝ խմորո՞ւն է քո մարմինդ, թէ ոչ (էջ 371բ):

3գ. Բարսամա ասէ.  
Թէ խմորուն էր որովայն մարն՝ ապա քացախեալ էր իմ կողքս (էջ 371բ):  
Հմմտ. «Պատճառք» տ. 111—119 եւ 155—157:

4ա. Կելեստիանոս ասէ.  
Խոստովանի՞ս գորովայն կուսին առանց խմորոյ եւ գրիստոսի մարմինն յանխմոր մարմնոյ ծնեալ առանց խմորոյ (էջ 371բ):  
Հմմտ. «Պատճառք» տ. 158—160:

4բ. Բարսամա ասէ.  
Այո՛, խոստովանիմ (էջ 371բ):  
Հմմտ. «Պատճառք» տ. 158—160:

5ա. Կելեստիանոս ասէ.  
Բնութիւնն է ստոյգ, թէ արիւնակ (էջ 372ա):

5բ. Բարսամա ասէ.  
Բնութիւնն ստոյգ է քան գարիւնակն (էջ 372ա):  
Հմմտ. «Պատճառք» տ. 170—171:  
Համ. խմբ. չունի:

6ա. Կելեստիանոս ասէ.  
Խմորոյն բնութիւնն ապականացո՞ւ է, թէ անապական (էջ 372ա):

6բ. Բարսամա ասէ.  
Ապականացու է ստոյգ՝ խմորոյն բնութիւնն (էջ 372ա):

6գ. Կելեստիանոս ասէ.  
Ահաւասիկ դու վկայեցեր քեզ, զի խմորով ապականես զնշխարն եւ ապականացու ասես գործովքդ զմարմինն տէրունական. զի

ջուրն զգինոյն համն տանի եւ խմորն զգաւրութիւնն ապականէ. նոյնպէս եւ աղն: Իսկ ձէքն գտիրտն զազրացուցանէ: Արդ՝ ո՞ւր է անապական հացն որ յերկնից իջեալ է. ո՞ւր այսօրն խառնուածս լինի (էջ 372ա):  
Հմմտ. «Պատճառք» տ. 172—179:  
Համ. խմբ. չ վերջում ունի՝ այս որքան խառնուածս լինի (էջ 47բ) փխ. ուր... լինի:

7ա. Բարսամա ասէ.  
Զի՞նչ համարիս դու զխմորով եւ զջրով պատարագն, եթէ վախճան քեզ հանդիպի (էջ 372ա):


7բ. Կելեստիանոս ասէ.  
Ոչ թէ միայն ես չառնուի գիացն զայն, այլ եւ թէ ոք ի տգիտաց առնոյր զնա, զնզովքն նեստորի կարդայի նա, եւ յեկեղեցոյ հանէի, եւ մեծ ջանիւ թէ լինէր արժանի յետին քոչակին (էջ 372ա):  
Հմմտ. «Պատճառք» տ. 194—199:

Ստուգ. օր. ում հարցունքն այսպէս է՝ Զի՞նչ ընդունիս զայն պատարագն որ ջուր խառնեն. իսկ պատասխանը միայն այսքան է՝ Ոչ միայն չառնուի, այլ թէ ի տգիտաց ոք առնոյր եւ մարտիրոսանայր, զնեստորի զնզովքն ի վերայ դնէի (էջ 31):

8ա. Բարսամա ասէ.  
Եւ զի՞նչ համարիս դու զայն հացն գոր մատուցանեմք խմորով եւ ջրով (էջ 372ա):

8բ. Կելեստիանոս ասէ.  
Համարիմ գիաց խմորուն եւ ձիթուն՝ չասել անուն հացի ի վերայ նորա. եւ որ հաղորդի ի նմանէ՛ համարիմ ուտել զմիս գոհից եւ ոչ համարիմ արժանի եկեղեցոյ եւ քրիստոնէութեան. զի ոչ վասն կատարելու վասն հայեոյութեան, զի գրիստոս յախտի բնութեան ասէք ձեռքով, որպէս ամենայն մարդ. զի թէ Աստուած համարէիք զնա, ոչ արկանէիք ի խորհուրդն աղ եւ ձէք եւ խմոր (էջ 372ա):

Ահնայտ է, որ այս հարցուպատասխանը չկայ «Պատճառք»-ում, բայց նկատելի է, որ խմբագրուել է նրա պատմական մասի «Հնախմբագրութեան» (տ. 35—40) բեկնանքով. թշնամանեցեն» (տ. 35—40) խօսքերի ազդեցութեան տակ:



<sup>67</sup> Համ. խմբ. ունի՝ մաքրէ գմեզ (էջ 47ա):



Մեր նպատակն էր «Պատճառք յաղազս հարցաքննութեան...» բնագրի ուսումնասիրութեանը խորամուխ լինել միայն այն չափով, որն անհրաժեշտ էր պատմականօրէն ներքին մէկը, էութիւնը՝ դրանով երեւան հանելու համար «Կեղեցատինոս Հռոմայ հայրապետին» ժամանակակից համարուած եւ Անտիոքի եպիսկոպոս անուանուող Բարսուամայի ինքնութիւնը. հաստատելու, որ նա ուրիշ մէկը չէր, եթէ ոչ այն նոյն անձնաւորութիւնը, որը 457 թուականից յետոյ եկեղեցական պատմութեան մէջ յիշատակուում է Բարսուամա Մծրնացի անունով. յայտնաբերելու եւ վերահանելու նրա նախամծրնեան շրջանի այդ գործունէութեան հետքերն ու զարգացման դիժը. արժէքաւորելու Իբաս Եղեսացու հետ նրա գործակցութեան էութիւնը՝ ապացուցելով, որ պատմականօրէն իրենց տեղում ու դերում են Բարսուաման եւ Իբասը՝ «Պատճառք»-ի գլխաւոր երկու հերոսները: Մի խօսքով՝ հիմնաւորում տալու պատմական իրողութիւնների այն ապագաման արձագանգներին, որոնք այս կամ այն ձեւի տակ տեղ են գտել ոչ վաղ քան Զ. դարում կեանքի կոչուած մի դրուածքում: Եւ պիտի ասել, որ պատմութեան համար արդէն աւելորդ է դրանից աւելին սպասել մատենա-

դրական մի անվաւերական դրուածքից, ինչպիսին է «Պատճառք»-ը, որովհետեւ նման դրուածքներում միշտ էլ իրար հետ շաղակաւ են լինում պատմականն ու աւանդականը, եղելութիւնն ու առասպելը, կուսակցական հակամարտութիւններից ծնուած սուտն ու կեղծիքը, եւ այլն: Բանասէր պատմաբանին ընկած բաժինն է՝ նկատել ու զնահատման ենթարկել նիւթին վերաբերող փաստադրական աղբիւրների եւ անվաւերականների միջեւ զոյուութիւն ունեցող տրամաբանական առընչութիւնները: Այդ էր, որ մենք կատարեցինք այստեղ՝ Ա. Հ-ի նորայայտ աղբիւրի վերաբերմամբ: Եւ ուսումնասիրութեան այս եղանակը նորութիւն չէ: Այսպիսի մօտեցմամբ ու մեթոդով է, որ պրոֆ. Է. Հոնիգմանին յաջողուել է, Ե. դարի եւ տիքեան վայրենաբարոյ վանահայր Բարսուամայի ինքնութիւնն ու գործունէութիւնը հետազոտելու համար, օգտագործել միաբնակ սբ. Բարսուամա ճգնաւորի վարքը, որը Զ/Է. դարերում խմբագրուած մատենագրական մի անվաւերական է<sup>74</sup>:

<sup>74</sup> Տես E. Honigmann, «Le couvent de Barşaumâ et le patriarcat jacobite d'Antioche et de Syrie», Louvain, 1954, pp. 6—23 («Le Barşaumâ historique et la Vie syriacque de Barşaumâ»). Տես նաեւ վերելում՝ ծան. 40 եւ 41:

ՊԱՏՃԱՌՔ ԶԱՂԱԳՍ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԵԱՆ

ԿԵՂԵՍՏԻՆՈՍԻ ՀՈՒՄԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ԵՒ ԲԱՐՍՈՒՄԱՅԻ ԶԱՐՄԱՌԻ ԱՆՏԻՈՔՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ\*

Ա = Երուսաղէմի ձեռ. No. 1303, էջ 333—355: Ժամանակ՝ 1301—1307 թթ.:

Բ = Երուսաղէմի ձեռ. No. 1001, էջ 289—303: Ժամանակ՝ ժլ դ.:

Յաւուրս բարեպաշտ թաղաւորին թէողոսի, ժողով եղեւ յեփեսոս վանն Եստորի, որ ըստ կամացն Աստուծոյ հալածեալ եղեւ ի կողմանս Խուժաստանաց: Իսկ զառ ի Եստորէ խմորեալ[ս]ն, Կիւրեղ Աղեքսանդրացի դրով էած ի հաւանութիւն, յորոց մի էր Յոհան Անտիօքացոց եպիսկոպոս, որ յետ երկու ամաց մահուանն Կիւրղի եւ նա վախճանեցաւ. եւ յետ սորա յաջորդէ զաթոն Բարսուամայ ամս Բժան:

\* Կեղեցատինոս անուան դրչական տարբերակները՝ չենք նշում: Մեր Բ օրինակը միշտ ունի Կեղեցատինոս, բացառութեամբ հինգ դէպքերի՝ Կեղեցատինոս, Կեղեցատինոս, Կեղեցատինոս, Կեղեցատինոս, Կեղեցատինոս: Իսկ Ա օրինակը միշտ ունի Կեղեցատինոս, բացառութեամբ հետեւեալ տարբերակները՝ Կեղեցատինոս (4 անգամ), Կեղեցատինոս (1 անգամ) եւ Կեղիստինոս (2 անգամ):

Սա էր այր ճարտարաբան եւ կարի տեղեակ աստուածային կտակարանաց, եւ էր յառաջադոյն քորեպիսկոպոս<sup>1</sup> լեալ Եստորի ի Կոստանդինուպոլիս<sup>2</sup>: Իսկ յորժամ ժողովեցան սուրբ հարքն յեփեսոս եւ, յաղթեալ Եստորի, նզովեցին, ետես նա ի վերայ երկոցունց<sup>3</sup> կողմանցն՝ եթէ զիա՛րդ որ հակառակն էր՝ չկարաց արմատանալ: Եւ եթող զԿոստանդինուպոլիս<sup>4</sup> եւ զնայց բնակեցաւ յԱնտիօք, զաղտ կալեալ զորոմն նորին Եստորի մինչեւ ի վախճանն Յովհաննու<sup>5</sup>, քանզի եւ նմա իսկ ոչ ծանոյց զիրան: Իսկ յետ մահուանն՝ տան զաթոն հրամանաւ թաղաւորին ցԲարսուամայ:

Իսկ նորա ժողովեալ զխաւսան Դիողորի<sup>6</sup> Տարսոնացոյ եւ զԵստորի<sup>7</sup> զիմարանութիւնն՝ ուսանի զհակառական, եւ ժողովեալ զխաւսան սրբոյն Աթանասի եւ Կիւրղի, իմանայր<sup>8</sup> զպատասխանիսն<sup>9</sup> բան առ բան, եւ զիտաց եթէ Եստորին չէ ճշմարիտ, բայց զմերժումն ապաշաւէր, եւ ընդ Կիւրղի պատասխանին մախայր յոյժ, մինչ զի զաղոյ բանսն ապականէր եւ ըստ իւր կամացն ի սոսա զնէր զբանսն՝ որում ընկեր էր եւ Իբաս, որ Եղեսաց հայրապետն<sup>10</sup> իսկ եղեւ, զոր Դիողորոս<sup>11</sup> Աղեքսանդրացի լուծանէր ի պատուոյն, քանզի յայնժամ սարկաւազ էր առ Բարսուամայ, տեղեակ յոյժ ասորոյն<sup>12</sup> եւ յոյն թարգմանութեան, որ բազում իրս հերձանէր ի պատուոյն, առաւել՝ յորժամ թարգմանէր իսկ:

Արդ՝ սոքա խորհուրդ էր մէջ առեալ աւերինաղբեցին զհերձուած[ս]ն ճուած յաւելեաց յասորի զբէն, առաւել՝ յորժամ աւերինաղբեցին զհերձուած[ս]ն զայնոսիկ, զիտելով զԵստորին թէ նա սոսկ մարդ ասէր զԲրիստոս, եւ զԿիւրղին՝ եթէ բաւանդակ Աստուած էր որ ծնան, եւ նոյն որ խաչեցան: Կեղծաւորեալ՝ ոչ զԵստորին<sup>13</sup> խոստովանեցին, զի սուտ էր, եւ ոչ զԵստորեալ՝ ոչ զԵստորին<sup>14</sup> զԿիւրղին, զի ընդ հակառակն էին. այլ զամենայն խոստովանութիւնն<sup>15</sup> զԿիւրղին, զի մի՛ [ի] յայտ եկեացէ այսպէս մի ընդութիւն հարկեցան խոստովանել, զի մի՛ [ի] յայտ եկեացէ նոցա չարութիւնն<sup>16</sup> եւ հալածեցին, եւ զարձեալ զիւրեանցն տնկեցին զորոմն զաղտ, զի մի՛ զիտացէ ոք զնոցա խորամանկութիւնն. փոխանակ զի Աթանաս եւ Կիւրեղ անապական ասեն զխաչելեան, նոքա բանիւք չհամարձակեցան ասել ապականացու, հնարեցան խմորով եւ ջրով ապականել զմարմին եւ զարիւնն Տեառն՝ յաւելեալ աղ եւ ձէթ<sup>17</sup>, որպէսզի ծաղր զանապականութիւնն<sup>18</sup> արացեն: Եւ որք հարցանէին<sup>19</sup> զպատճառ լինիցի<sup>20</sup> ի կազմութիւն զիւրան հրամայելով, որպէսզի այնու<sup>21</sup> զԱստուած թշնամանեցեն: Եւ զայս յորժամ ոք հարցանիցէ վասն խաչեցար սրբալինիցի<sup>22</sup> ի կազմութիւն զիւրան զԱստուած խաչեալ ըստ մարմնոյ միաւորութեանն<sup>23</sup>, իսկ սրտին զայս՝ թէ մարմինն միայն խաչեցաւ, եւ այն՝ ապականացու, իսկ յետոյ ապա միաւորեալ կոչի Աստուած, զի ընդ աջմէ Աստուծոյ նստի՛ խոստովանեալ լիցի: Իսկ զարձեալ միւսն՝ զի ի քառասներորդին պատարագ մատուցանեն, եւ միւսն՝ զի, որպէս զԵստորականքն<sup>24</sup>, սկիզբն աւուր զերեկոյն խոստովանին, եւ զմուտ

1 Ա. քորեպիսկոպոս:  
2 Բ. Կոստանդինուպոլիս:  
3 Ա. Երկոցունց:  
4 Բ. Կոստանդինուպոլիս:  
5 Բ. յոհաննու:  
6 Բ. Թէողորի:  
7 Ա. Կոստորի:  
8 Ա. եւ իմանայր:  
9 Բ. զպատասխանիս:  
10 Բ. հայրապետ:  
11 Բ. Դիողորոս:  
12 Բ. ասորոյն:  
13 Ա. Կոստորին:  
14 Բ. խոստովանութիւն:  
15 Բ. չարութիւն:  
16 Բ. յաւելեալ եւ ձէթ:  
17 Բ. զանապականութիւն:  
18 Ա. հարցանեն:  
19 Ա. ասեն:  
20 Բ. առնեմք զհաց:  
21 Բ. լիցի:  
22 Ա. այնիւ:  
23 Բ. միաւորութեամբն:  
24 Ա. Կոստորականքն:

պահանջներն պատճառեալ պատուեն: Իսկ միւսն՝ զվախճանելոյն խոստովանութիւնն<sup>25</sup> չհամարին<sup>26</sup> ինչ: Նա եւ այլ եւս՝ զի զմերձաւորացն ամուսնութիւնն պատշաճ իսկ վարկանին<sup>27</sup>: Եւ այլ բազում ինչ աւերինադրեաց նզովեալն Բարսումայ: Իսկ զի սկսաւ ուսուցանել զչար վարդապետութիւնն<sup>28</sup> իւր այլոցն մեծաւ դաւաճադութեամբ:

Դէպ եղեւ սարկաւազ<sup>29</sup> մի Հոռովմայ հայրապետին, զի անդ էր եկեալ խնդրելով ի նմանէ զթուղթսն Պարապմանց զի նա ունէր եւ իւր կամէր ընդաւերինակել, քանզի զՀոռովմայն ոմանք չարահնարք ապականեալ էին: Իսկ սարկաւազին զայն ետես որ նորայն էր, զի եւ նա կարի իսկ ապականեալ էր յամենայն պատճեանսն, զարմացաւ ընդ միտսն, զի աւերինակն ստուգիւ էր եւ ընդաւերինակեալն ոչ ճշմարիտ. ի ծածուկ հարցեալ ընդ մի ի պաշտանայիցն (sic), եւ զամենայն ստուգիւ ծանեաւ ի նմանէն: Եւ յարուցեալ՝ եկն առ Բարսումայ եւ սողոսկեալ բանիւք պատրեաց զնա, եւ խնդրեաց ի նմանէ զաւերինակեալ գիրսն, զոր հաւանեալ ետ զնոյն ընդաւերինակեալ թուղթսն, եւ յղեաց ի Հոռովմայ ի ձեռն Սերխանոսի սարկաւազին<sup>30</sup>, եւ նորա փութանակի բերեալ՝ ետ զնա ցերանելի հայրապետն: Չոր առեալ ընթերցեալ զարմացաւ յոյժ, եւ արտասուեալ ասէր. Ո՛վ Տէր, տե՛ս զաշխատանս ժիր եւ անպարտելի մշակին քո եւ եկեղեցւոյ ծառայի քո, եղբաւրն իմոյ Կիւրղի: Եւ վաղվաղակի թուղթ գրեալ ետ ցնոյն Սերխանոս սարկաւազ եւ առաքեաց առ նա աւերինակ զայս.

Փութացի՛ր, եղբայր, դալ առ իս, քանզի կամիմ զքո թուղթս ընդաւերինակել յասորի լեզու, քանզի աղաչեցին զիս Եղիպտացիքն. եւ այսմ իրաց տեղեակ դո՛ւ եւ Իբա՛ս էք: Արդ մի՛ համարիր աշխատանս զգալը առ իս փութանակի:

Իսկ նորա ընթերցեալ զթուղթն՝ թողու փոխանակ իւր զԻբաս խորհրդակից իւր, եւ ինքն զնաց ի Հոռովմայ:

Արդ՝ իբրեւ հանդիպեցան միմեանց, զողջոյնն վարկապարզի տուեալ Կեղեստինոսի, եւ հրամայեաց նստել: Եւ իբրեւ նստան՝<sup>31</sup> հրամայեաց Կեղեստինոս զպրին իւրում ընթեռնուլ զթուղթսն ապականեալս Բարսումայի, եւ հարցեալ թէ ընդէ՞ր այսպիսի<sup>32</sup> խաւսք են ասացուած որ լի է ամենայն դառնութեամբ, իսկ նա ասէ. Ես ո՛չ դառնութիւն ինչ զիտեմ ի դմա, այլ կարի՛ ճշմարտութիւն:

Կեղեստինոս ասէ. Ձիւ՞րդ է ճշմարտութիւն՝ ապականացու ասել զխաչեցեալն, եւ ապա յետ<sup>33</sup> յարութեանն զմիութիւնն:

Բարսումայ ասէ. Թէ՛ մի էր՝ ապա ոչ էր բաժանեալ յերիս: Կեղեստինոս ասէ. Ո՞ր են երեքն:

Բարսումայ ասէ. Մին՝ զի զմարդկային<sup>34</sup> հողին ի ձեռն Հաւր ասէ աւանդեալ<sup>35</sup>: Երկրորդ՝ զի մարմինն մեռեալ ի դերեզմանի սոսկ: Երրորդ՝ զի հողին ի դժոխս առանց մարմնոյ:

Կեղեստինոս ասէ. Ապա ուրեմն չէ՛ այս դործ ապականացու մարմնոյ, նա եւ կարէ իսկ ոչ. ապա թէ՛ այսմ ոչ հաւատաս՝ տե՛ս զի մեռեալ մարմին, եւ արի՛ւն անդամ ոչ հանէ<sup>36</sup>, իսկ Քրիստոսի մարմինն ջուր եւ արիւն իսկ հանեալ:

25 Բ խոստովանութիւնն:  
26 Բ չհամարէին:  
27 Բ վարկանէին:  
28 Բ վարդապետութիւնն:  
29 Ա սարկաւազի:  
30 Ա սերխանոս սարկաւազի:

31 Բ եւ նստան:  
32 Ա այսպէս:  
33 Բ զիւրդ է ճշմարտութիւն զխաչեցեալն եւ ապա յետոյ:  
34 Բ մարդկային:  
35 Բ հօր աւանդեալ:  
36 Բ ոչ է հնար:

90 Բարսումայ ասէ. Տեսեր զի ջուրն որ ի կողիցն եւ, ո՛չ զանապականութիւն ունի, այլ զապականութիւն:

Կեղեստինոս ասէ. Ա՛ւն անդր, քա՛ւ լիցի այդմ, այլ կրէր զկենդանութիւնն<sup>37</sup> եւ զանապականութիւնն. քանզի իշխանութեամբ զհողին<sup>38</sup> արձակեալ՝ Աստուծոյ է, եւ երեքաւրեայ յարութիւն՝ ոչ ապականացուի է:

95 Բարսումայ ասէ. Ապա մինչ այն ջուրն չէր ապականութիւն, զմերն որ ի բաժակն արկանեմք՝ ընդէ՞ր դարձիւք:

Կեղեստինոս ասէ. Մի՛ անմիտ խաւսիւք կարծեր զբանդ, զի այս ջուրս ոչ եթէ ի պատարադին խորհուրդն է, այլ ի մկրտութեանն<sup>39</sup>:

100 Քանզի եւ աւետարանադիրն իսկ ասէ, եթէ՛ Եւ ի կողից նորա ջուր եւ ապա արիւն: Արդ՝ ջուրն զմկրտելոցն խաչիւ եւ արեամբ հանդիպիլ ցուցանէ Քրիստոսի, բայց ջրոյն երեւումն նոր նշան էր եւ վկայ: Ձի բազումք ի բժշկաց իսկ ասեն, թէ՛ ցաւ մի որ լինի կամ ի տրտմութենէ կամ ի կսկծոյ, որ յանկարծակի ողին ելանէ եւ արիւնն ցամաքեալ ո՛չ

105 ժամանէ. եւ յայնժամ եթէ՛ ոք խթէ ի նա, արիւն բազում ելանէ ի նմա- նէն: Արդ՝ եթէ՛ յայն իսկ հասեալ բաւական էր նոցա անաւրէն բանիցն ի վերայ մեր յարձակմանն, բայց դու նախ ասա ինձ, թէ՛ ո՞ր է վկայն ձեր որ զջուրն եւ զխմորն յիշէ. ցո՛յց դրոց վկայութեամբ միայն, զի զԱթա- նաս զապականադործն չընդունիմ որ ելից զեկեղեցի Աստուծոյ չար

110 ուսմամբ:

Բարսումայ ասէ. Կարե՞ս յիշել զբանս Յովհաննու<sup>40</sup> որ ի Կաթողիկէսն, զի ասէ, եթէ՛ ջուրն եւ հողին եւ արիւնն մի են:

Կեղեստինոս ասէ. Յիմա՛ր եւ անմիտ, ո՞չ ապաքէն դու ինքն դա- տեցար զքեզ. զի թէ՛ յառաջ զարիւնն եւ ապա զջուրն էր ասացեալ՝ բարի ոք էր. դա աւաղիկ եւ վկայը եւս չէ՛ այդմ վկայ, զի ջուրն մկրտէ, եւ հողին սրբէ, եւ ապա ջրովն մաքրեցաւ, զհողին ընկալեալ՝ տէրունա- կան մարմնոյն եւ արեանն արժանանայ: Եւ վասն այնորիկ ասէ Քրիստոս,

115 եթէ՛ Որ ոք ոչ ծնցի ի ջրոյ եւ ի հողոյ, ոչ մտանէ յարքայութիւնն<sup>41</sup> երկնից: Բայց դու աղէ՛, ասա՛՛ զոր ես հարցանեմ: Մինչ աշակերտացն ասաց Տէրն այսպէս. Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ՛<sup>42</sup> ոչ կերի՛ջիք զմարմին Որդւոյ Մարդոյ, եւ արբըլիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս ձեր:

120 Ո՞վ էր Որդին Մարդոյ: Բարսումայ ասէ. Որդին Աստուծոյ էր: Կեղեստինոս ասէ. Խոստովանի՞ս զՈրդին Աստուծոյ որպէս զՀայր յերկինս:

125 Բարսումայ ասէ. Խոստովանիմ որպէս զՀայր: Կեղեստինոս ասէ. Բաժանե՞ս զՀայր՝ յորժամ Աստուծոս ասես:

130 Բարսումայ ասէ. Ո՛չ, այլ միութիւն: Կեղեստինոս ասէ. Եւ ո՞չ զՀողին: Բարսումայ ասէ. Եւ ոչ զՀողին: Կեղեստինոս ասէ. Որդւոյ մի՞ բնութիւն ասես, թէ՛ երկու: Բարսումայ ասէ. Երկու, ըստ այնմ՝ զի մարմինն այլ, եւ Աստուծոս այլ:

Կեղեստինոս ասէ. Խոստովանի՞ս յառաջ քան զծնունդն՝ զմարմինն

135 Աստուծո: Բարսումայ ասէ. Այո՛ ասեմ:

37 Բ զկենդանութիւնն:  
38 Ա զհողին:  
39 Բ այլ մկրտութեանն:  
40 Ա յովհաննու, Բ յովհաննու:  
41 Բ յարքայութիւնն:  
42 Բ թէ:

- Կեղեպտիկոս ասէ. Անապակա՞ն ասես :
- Բարսոււմայ ասէ. Ասե՛մ :
- Կեղեպտիկոս ասէ. Բա՞նքն հաւատալի է, թէ արդիւնք զոր զործքն
- 140 *ցուցանեն* :
- Բարսոււմայ ասէ. Գո՛րծքն են մնացականք :
- Կեղեպտիկոս ասէ. Գործովքն մարթե՞ս զբանսն սուտ դտանել :
- Բարսոււմայ ասէ. Մարթի՛ : Զի թէ բանիւք դարբին ասին եւ զործաւք՝  
բրուտ, արդիւնքն ճշմարիտք՞ են քան զբանսն :
- 145 Կեղեպտիկոս ասէ. Ունի՞ս վկայ քո բանիդ զերկիրնս եւ զհրեշտակս,  
ընդ նմին եւ զԱստուած :
- Բարսոււմայ ասէ. Ունի՛մ ընդ նմին :
- Կեղեպտիկոս ասէ. Կամի՛մ քո բանիւք(?)<sup>44</sup> զգործոյդ ցուցանել, եւ  
զործովդ զքեզ սուտ առնել ի բանդ :
- 150 Բարսոււմայ ասէ. Վարկանի՛ս՝ թէ կարես :
- Կեղեպտիկոս ասէ. Ասեմ՝ թէ կամիս :
- Բարսոււմայ ասէ. Աս՛ա՝ թէ կարես :
- Կեղեպտիկոս ասէ. Մարդոյ կողք եւ երակք ջո՞ւր ծնանին, թէ արիւն :
- Բարսոււմայ ասէ. Արիւն :
- 155 Կեղեպտիկոս ասէ. Խմորո՞ւն է քո մարմինդ, թէ ոչ :
- Բարսոււմայ ասէ. Թէ խմորուն էր որովայն մաւրն՝ ապա քացախեալ  
էին իմ կողքս :
- Կեղեպտիկոս ասէ. Խոստովանի՞ս զորովայն Կուսին առանց խմորոյ եւ  
զՔրիստոսի մարմինն յանխմոր, որ մարմնով ծնաւ առանց խմորոյ :
- 160 Բարսոււմայ ասէ. Խոստովանի՛մ որպէս վարկանիսդ :
- Կեղեպտիկոս ասէ. Արդա՞ր էր այն զոր Տէրն ասաց՝ թէ Ե՛ս եմ հացն  
կենաց իջեալ յերկնից, եթէ ոք ուտէ ի սմանէ՝ կեցցէ՞<sup>45</sup> յաւիտեան :
- Բարսոււմայ ասէ. Արդար էր :
- Կեղեպտիկոս ասէ. Եւ ե՞րբ էջ յերկնից :
- 165 Բարսոււմայ ասէ. Յորժամ մարմնացաւն :
- Կեղեպտիկոս ասէ. Եւ ե՞րբ ումեք ի մարմնոյն որ յերկնիցն էջ :
- Բարսոււմայ ասէ. Այո՛յ :
- Կեղեպտիկոս ասէ. Ե՞րբ :
- Բարսոււմայ ասէ. Ի վերնատանն :
- 170 Կեղեպտիկոս ասէ. Բնութի՞ւնն<sup>46</sup> ստոյգ է, թէ աւրինակն :
- Բարսոււմայ ասէ. Բնութիւնն :
- Կեղեպտիկոս ասէ. Խմորն ապականացո՞ւ է, թէ անապական :
- Բարսոււմայ ասէ. Բնութեամբ ապականացու է :
- Կեղեպտիկոս ասէ. Ահաւարիկ դու վկայեցեր քեզ, զի խմորով ապա-  
կանես զնշխարն եւ ապականացու ասես զործովք զմարմինն տէրունա-  
կան, խառնելով ի նմա ջուր, եւ ջուրն զգինին եւ զհամն չըջէ եւ խմորոյն  
զգաւրութիւնն ապականէ, եւ աղ՝ մի կշիւուն (sic) ապականէ, եւ ձէթն  
զսիրտն զազրացուցանէ : Արդ ո՞ւր է անապական հացն որ ի յերկնից  
իջեալ է՝ յորժամ այսքան իրք ի ներքս խառնի : Արդարեւ՝ պատարադ
- 180 չխոստովանի՛մ զայն, այլ հայհոյութիւն եւ զուր ազաղակ :
- Բարսոււմայ ասէ. Ապա չէ՞ր խմորուն հացն զոր ետ Տէրն աշակեր-  
տացն :
- Կեղեպտիկոս ասէ. Ո՛չ կարես զրով ցուցանել. զաւետարանչացն  
միայն զայս լսես, եթէ Յառաջնունմ աւուրն բաղարջակերացն յորում
- 185 զպասեքն զենուին : Զայս պատուիրանս Հրեայքն քաջ պահէին, զի Մով-

<sup>43</sup> Ա. ճշմարիտ :

<sup>44</sup> Ա. բանիցդ, Բ. բանիդ :

<sup>45</sup> Բ. ուտէ կեցցէ :

<sup>46</sup> Բ. բնութիւն :

- սէս<sup>47</sup> ասացեալ էր աւրինաւքն, թէ զէ աւր<sup>48</sup> բաղարջ կերիցեն : Եւ թէ  
յառաջնում աւուրն անհետ առնէին զխմոր ի տանցն, մինչ զի եւ ի ծակս  
մկանցն զխմորեալ յուզէին եւ ոչ դտանէին : Եւ որ ոք խմորուն ուտէր՝  
սատակեալ լինէր յիսրայէլէ : Արդ՝ ո՞վ տայր նոցա հաց խմորուն. զի ուր  
190 նոքա զատիկ առնէին, նա եւ ընդել ոմանց չէր նոցա. եւ աշակերտացն  
իսկ տուն չդոյր եւ յաւտար այրն վասն այնր զնացին : Արդ՝ մինչ վկայ  
չունիս, եւ Քրիստոսի մարմին եւ արիւնն անապական է, դու զիա՞րդ  
համարձակիս ապականել զսուրբ խորհուրդն :
- Բարսոււմայ ասէ. Զի՞նչ ընդունիս դու զայնպիսի պատարադն զոր  
195 խմորով եւ ջրով ոք մատուցանէ եւ քեզ վախճան հասանէր :
- Կեղեպտիկոս ասէ. Ո՛չ եթէ չառնուի՞ս<sup>49</sup> զայն հացն, այլ եթէ եւ այլ ոք  
մերձենայր ի տղիտաց, թէ եւ մարտիրոս իսկ լինէր վասն Քրիստոսի, եւ  
զնզովն նետորին<sup>50</sup> նմա կարդայի, եւ ի սուրբ եկեղեցւոյ արտաքս  
հանէի, եւ չառնէի արժանի յետին թաւազակին :
- Բարսոււմայ ասէ. Եթէ երեսայ ոք հանդիպէր՝ մկրտէի՞ր յիմում  
200 եկեղեցւոյն թէ ոչ :
- Կեղեպտիկոս ասէ. Ինձ քա՛ւ լիցի մկրտել. այլ թէ եւ ի յիմար քա-  
հանայից ոք մկրտէր՝ զինքն ընդ երեսայս դաւանէի. զի լաւ է ի տեղւոյ  
ինչ՝ լուի ջրով յանուն Աստուծոյ ճշմարիտ հաւատացելոյ մկրտել, քան  
205 թէ ի հայհոյէ՛տ աջոյ ջախջախիլ, աջով հերձուածողի մկրտել :
- Բարսոււմայ ասէ. Եւ մկրտելոյն զի՞նչ մեղ դոյ :
- Կեղեպտիկոս ասէ. Յորժամ եկեղեցի չի՞նես՝ յառաջ դու զեկեղեցի<sup>51</sup>  
սրբես կամ զիսան, թէ եկեղեցին զքեզ :
- Բարսոււմայ ասէ. Ես զեկեղեցի<sup>52</sup> սրբեմ :
- Կեղեպտիկոս ասէ. Ապա զիա՞րդ ասես սրբել զեկեղեցին որ հեր-  
210 ձուածողդ ես, զի Յոհան Կոստանդինու՞ն<sup>53</sup> հայրապետն ա՛յսպէս ասէ, եթէ  
վասն այնպիսեացն հերձուածողացն որ զՋուրն ի սուրբ խորհուրդն խառ-  
նեն : Արդ՝ եթէ ջուրն հերձուած է, ապա խմորն, եւ այն որ զհաց պա-  
տարադին զեղարդեամբն<sup>54</sup> խոցէ՝ կրկին հայհոյութիւն եւ հերձուած է :  
215 Զի յորժամ զեկեղեցին աւրհնես՝ Հոգին սուրբ ոչ իջանէ, զի յանձն<sup>55</sup>  
եւ ընդ աջոյ ոչ միաւորի, այլ փախչի, ապա յա՛յտ է թէ ուր զաջդ զնես՝  
չէ աւրհնեալ : Ապա թէ զեկեղեցին չաւրհնէ պեղծ<sup>56</sup> աջդ, եւ զձէթն նո՛յն  
աջովդ դարձեալ աւրհնես՝ որ եւ ոչ ձէթն է աւրհնեալ յայդմ աջոյ, ոչ  
220 եկեղեցին յայնմ ձիթոյ, եւ ոչ Հոգին յերեքինդ : Արդ՝ զիա՞րդ է աւրհ-  
նեալ այն եկեղեցին, մինչ զի յորժամ կարծես թէ աւրհնեցաւ եւ նոյն  
աւուր դառնաս հերձուած կատարես եւ զՔրիստոս հայհոյես, յոր՝ Քրիս-  
տոս բնաւ չիջանէ, ապա զիա՞րդ չէ արժան զքո մկրտեալն դարձեալ ինձ  
մկրտել : Զի թէ յուզափառ եկեղեցի յուզափառ քահանայէ սուրբ  
225 ձիթով աւրհնեալ<sup>57</sup> յորժամ հերձուածողն մերձենայ, Հոգին Սուրբ  
չիջանէ՝ մինչեւ ելանէ, եւ եկեղեցին զարձեալ սրբի եւ ապայ իջանէ :  
Յորժամ քո ո՛չ աջդ եւ ո՛չ ձէթն եւ ո՛չ պատարադն զՀոգին Սուրբ չըն-  
դունի, քո եւ մկրտեալն<sup>58</sup> իսկ յայտ է, թէ եւ պղծեալ եւս է, զի Հոգին  
Սուրբ քա՛ւ լիցի՝ թէ իջանէ յա՛յտ մկրտեալն : Իսկ թէ ի մկրտեալն<sup>59</sup>  
230 տացես առ ի քէն լինել մարմնոյ եւ արեան ա՛յնպէս է, որպէս զողայ ոք  
չնալ ուսուցանէ, եւ նա թէ եւ կատարէ<sup>60</sup> զգործն՝ չդատի, զի անդիտու-

<sup>47</sup> Բ. մոսէս :

<sup>48</sup> Բ. է որ :

<sup>49</sup> Բ. չառնուի :

<sup>50</sup> Ա. նետորի :

<sup>51</sup> Բ. կոստանդինու :

<sup>52</sup> Ա. զեղարդամբն :

<sup>53</sup> Բ. անձն :

<sup>54</sup> Բ. պիղծ :

<sup>55</sup> Ա. աւրհնեալն :

<sup>56</sup> Բ. եւ քո մկրտեալն :

<sup>57</sup> Ա. Բ. թէ ի մկրտեալն :

<sup>58</sup> Բ. թէ կատարէ :

